

տուն անձ մը, Գալուստ՝ Մուրատի Ազու-  
լիցայ Գողթնեայ, տպագրութեան ծախքը  
տալով հրատարակեց ի ձեռն « տպագրապետ  
Գրիգորի դպրի »:

Իր քուլը տպագրեցաւ 1713ին Յովհանն  
նու Մրզուզ վարդապետի կրթութիւն հասա-  
ւոյ կոչուած երկասիրութեան երկրորդ տպա-  
գրութիւնն, որոյ վերջարան յիշատակարանն է,  
և Գրիգորի տպագրական գործունէութեան  
արդիւնքէն՝ ընդհանրապէս յայտնի կ'երեւնայ:

Թէ՛ որչափ և որպիսի փոյթ ունէր ի նախ-  
նեաց աւանդուած և անկորուստ մնացած գը-  
րուածներն՝ տպագրութեամբ ազգին ընտանի  
և մատչելի ընել. « ի վաղուց հետէ, կ'ըսէ,  
ածեալ իմ զմտաւ՝ տպեցեալ խորովէ ի  
օրտի, եթէ սրբան գրեանք աստուածայինք...  
արտադրեցեալք զոն ի մերս, և ահա ոչ ե-  
րեւին ներկայապէս »:

Շարադարեի

Հ Ո Մ Ե Ր Ո Ս Ե և Հ Ա Յ Ք



Հ Ո Մ Ե Ր Ո Ս ի գիրքն, ի բաց առեալ իր  
կողմնաբանական և գիւցադնական մա-  
տերը, զարմանալի կերպով ճմարիտ  
է: Արեւելեան կենաց մեղի տուած նը-  
կէ կարագրութիւնն՝ կարծես ներկայ ժա-  
մանակիս պատկերն է: Մ. Ա. Փէյլէ (M.  
A. Feillet), որ Մ. Գ. Գիգէի (M. P.  
Giguët) թարգմանած Հոմերոսի գիւցազ-  
ներգութիւնը համառօտեք և ծանօթութեամբ  
նոխացուցեր է, հետեւեալ գիտազոյթիւնները  
կ'ընէ այն բացատրութեան նկատմամբ, ու-  
րով Աքիլէս կը նախատէ զԱգամեմոնն,  
կոչելով զինքը շոնալեայ՝ (χουνδος δειματ'  
εχω). « Այսպիսի նախատինքներ այլ ևս  
մեր ընտրութեան չեն պատշաճիր. Հոմե-  
րոսի քերթութիւնը յատուկ և նախկին բա-  
ցատրութիւնը են »: Այս, կ'ընդունիմ՝ թէ  
պարիսեան դահլճնաց մէջ չի գործածուի  
այսպիսի յիշոց, այլ արեւելքի մէջ ամէն օր  
գործածական է: Իմ հայագի հայրենակցացս  
սպէս դասակարգին մէջ յաճախ կը գործա-

ծուի շան այդ բացատրութիւնը, որ ճշդիւ  
Աքիլլեսի բրած նախատինքն է: Մովսէս  
Խորենացի, որ հայոց Հերոդոտոսը անուա-  
նուած է, կը պատմէ թէ Չարմայր՝ հա-  
յոց նահապետն՝ Եթովպացոց հետ միասին  
Պրիամոսի օգնութեան գնաց, և թէ Աքիլ-  
լեսի հարուածներուն զո՛ր եղաւ: Կարելի էր  
տարակուսիլ այն հայ-տորոյական զաշնակ-  
ցութեան վաւերականութեան վրայ, եթէ  
չուզուէր նոյնացնել հայերը « ամենահեա-  
ւոր Ասկանիոյ փոխզացոց » հետ, զորս կը  
դնէ Հոմերոս Տրոյացոց զաշնակցաց թուոյն  
մէջ, սակայն գրեթէ անտարակոյս է հայոց  
և Տրովպացոց կամ Յունաց մէջ եղած ազ-  
գակցութիւնն: Հոմերոսի նկարագրած յու-  
նական սովորութիւնները զտած եմ ես գրե-  
թէ ամբողջովին ժամանակակից հայոց մէջ,  
ոչ թէ եւրոպական քաղաքականութեամբ կեր-  
պարանափոխ եղած գասակարգին մէջ, այլ  
ստորին ժողովրդական գաղին մէջ՝ որք չեն  
գիտեր ո՛չ իշխականը և ոչ Ոգիտականը, ա-  
նոց մէջ՝ որք չեն գիտեր այրութիւնը: Ես  
անխափր մի քանի օրինակներ մէջ պիտի  
բերեմ:

Հոմ. Եւ. Ա. երգ. 225.

Ազատեմունն Յունաց հետ ցուլ մի զոհեց ամենագորն Արամազդայ, և զոհին ամբողջ կռնակը Այսոսի տուաւ. իմ հայրենակիցներս այլ կը զոհեն Աստուծոյ, և նոյն իսկ սըրբոց, կովեր և ոչխարներ, և քահանայիս կը նուիրեն պոչը և մէկ ստիկըք զոհին (մասաղ), որուն զուկը գէպ ի արեւելք կը դարձունեն մերթելու միջոց :

Ինչպէս Հոմերոս, այսպէս այլ հայք սըրբազան կը համարին աղը, հացին չափ սըրբազան (աղոռհաց) :

Ազատեմունն կը հաւանի, բացառութեամբ, որ Աքիլլէս առնու իւր պալատին մէջ թողած երեք աղիկներէն մին, « առանց իրեն նուէրներ տալու » . նմանապէս ներկայ ժամանակս այլ, հայ զիղացիք չեն կրնայ ժամանանալ աղիկան մի հետ, եթէ յառաջագոյն նորա հօրը նուէրներ չի տան : . . . .

Պատրոկլոս զինուորի մի վիրաց վրայ կը գնէ դառն արմատ մի, որ ցաւերը կ'անցունէ. և երբ կը սպանուի նա Հեկտորէն, թանձր իւղով մի կ'օծեն գնա, և վերբերուն մէջ ինը տարուան բալասան մի կը լեցունեն. հայերն այլ, սովորաբար ինը տարի, ձեթին մէջ ծաղիկներ կը պահեն, զորոնք պարսաւ և քանքարոն կը կոչեն, և այս բալասանով կը բժշկեն որածայր կամ օտտաթիկ կարող գէնքերու վերբերը :

Հոմերոս կը կարծէ թէ Արամազդ ոսկեղէն կշիռքի մէջ կը կռէ մահկանացուաց բախար. հայք ևս կը կարծեն թէ Աստուած, վերջին դատաստանին օրը, ոսկիէ կշիռքով պիտի կռէ բոլոր մահկանացուաց մուլութիւնները և առարիննութիւնները :

Պատրոկլոսի մեռնելէն վերջը, Աքիլլէս ի պատիւ յուղարկաւորութեան առատ ճաշ մի կու տայ Յունաց. հայք ևս նոյն բանը կ'ընեն ի պատիւ իրենց մեռելոց, և զոր հոգեհաց կը կոչեն :

Երբ հայ մի կը մեռնի, իւր ազգականներն և բարեկամք ճիշդ այն բանը կ'ընեն, ինչ որ կ'ընէին երբեմն Յոյնք և Տրոյացիք. Աքիլլեսի նման կը փետան իրենց մահբերը<sup>1</sup>,

յուսահատութենէն գետին կը թաւալին, և սոսկալի հառաչանքներ կ'արձակեն. ինչպէս Հեկտորի դիակին քով, երգիչ կանայք կամ գուսանք կը կենան մեռելոյն շուրջը և կը սկսին կոծել և ողբալ. և մինչ նոքա հեծեծանաց հետ խառն ողբական երգեր կը հընչեցնեն, կանայք չորս բոլորը կը հեծկլուտան. հայ Անդրոմաքներ, Հեկաբէներ և Հեզիսէներ՝ յանկարծակի ներշնչուած ոտանաւորներներ կ'արտասանեն ի գոլութիւն մեռելոյն (գովասանք կամ շաց), նորօրինակ արուեստով մի, և որոնք քերթողութեան հօրը ոտանաւորներուն չափ սրտաշարժ և գեղեցիկ են : Դատեցէք զայն հետեւեալ եղերերգութեամբ՝ զոր Արարկերի հայ կին մի շինայ է իւր զեռահասակ զակիին մահուան վրայ .

« Թող մեռնիմ ես (զոհ կամ դուրպան ըլլամ) քու նոճիի պէս հասակիդ, որ ծաղիկ նման թառամեցաւ : Ի՞նչ, միթէ կը պակսէր քեզի մօրդ փափուկ ծունկը, որ այսպէս գլուխդ գետին ինկաւ : Ի՞նչ կը պակսէր քեզի՝ որ թողուցիր հօրդ բնակարանը :

« Հայրը հոտաւ. բերէք իրեն պտուղներով լի ափսէն : Գացէք բժիշկ մի փնտաւելու հիւանդ զակիս համար : Արթնցուցէք իմին խելացի զաւակս, իմին սիրուն պզտիկս. շատ քնացաւ, արթնցուցէք որ գլուխը չի ցաւի : Ելի՛ր, զաւակս, տես թէ ո՞վ եկեր է զքեզ տեսնելու. երթանք քովի գեղեցիկ զահլըճին մէջ նստինք : Փորթիկ ձայն մ'անպամ չի կայ. կը քնանայ նա, բնաւ չի արթնար : Ի՞նչ ձիւն եկաւ զակիս : գլխուն, ի՞նչ սև դժբախտութիւն : Մի՛ խաբէք զիս՝ այսպիսի երկայն քուն չի ըլլար : Մեռած է, մեռած է զառնուկս : Տունս կործանեցաւ յախտեանն » :

Այս պարագայիս մէջ զարձեալ դիտել պիտի տամ, թէ փոքր Ասիոյ ժողովրդոց մէջ միայն հայերն են՝ որոնք հին ժամանակներ յոյն աղջկան մի պատմական առեւանգելուն յիշատակը պահեր են : Ես հրատարակած եմ,

նին. երբ իրենց որդէք կամ եղբայրներ և քուրբեր կը մեռնին :

1. Այս ստայոյն աւանդութիւնը կամ առասպելը, շատ կին ժամանակներէ սկսեալ և նախ քան զԵնոքալիս, Յոյները և Արաբիք հնարեցին հայոց ասոնքը կամ զաւանդութիւնը կասկածելի ընելու համար : Յ.

1. Մինչև հիմակ կը պատահի երբեմն, Պարսկական յոց մէջ, հայ ծաղիկ և կանայք կը ցեխտան զլուխ.

Հայաստանի (L'Arménie) 1892ի գեղ-  
տեմբեր 15ի թուոյն մէջ, իրենց ժողո-

մրդական: արոյցները Ս. Սարգսի մասին, զոր  
կը համարին թէ կարին հայ ձիաւոր մ'ե-  
ղած լինի, որ տակահներ է գեղեցիկ յոյն  
աղջիկ մի: Այս աւանդութիւնք թերեւ հե-  
ռաւոր արձագանգը լինին Պարսի ձեռքով  
Հեղինէի առեւանդութիւն, որ տակաւին մինչեւ  
ցարդ Հայոց և Յունաց անզրագէտ մտերուն  
մէջ հակառակութեան պատճառ մ'է: —  
Տրոյացիք արդեօք հայ ցեղ մ'էին:

Կ - 9 -

Ներսէս Շնորհալին, Յունաց կեռ ունեցած դրաւոր վե-  
նարանութեանց մէջ, Աստուծոց պահոց մրց խառն-  
լով կը ներքէ սպ առաջդիւր, և հանգոց է առաւել  
քան զգեղեցուարդն սնուանեալ: Կ'ըսէ. (Հմեռ. Շնոր-  
հալի և պարտաւոյ իւր. 2. Գ. Ալեշան. Վիեննայի,  
1873, էջ 269-272 և 514): Կ. թ.

# ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԶԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵՒՍ

(Տես յէջ 221)

## ԽԵ

Արաս-թուման. իւր դիրքն և ջրերն. — Անտառներն. — Երբ ի Ռիոն. — Գեղեցիկ  
ձանապարհ. — Գլքարի կիրճն. — Բուսականառքիանն. — Իմերաց գիւղո-  
րայք. — Ապանովի կայանքն և իւր շերմուկքն. — Պաղտաս գիւղն. — Ժա-  
մանուսն ի Սիոն և ի Պարոսմ:

**Ա** Յ շրջագայութենէն յետոյ վերջ-  
նական կերպով հրատեղաի ողջոյն  
կուտանք Պ. Մովսէսֆեանին և կը  
մեկնինք իրմէ, որուն շնորհիւ շատ  
ախորձելի կերպով կատարեցինք մեր  
ձանապարհորդութիւնը: Շատ փափաքելի էր  
մեզ շթողուլ այս գեղեցիկ երկիրը՝ առանց  
տեսնելու իւրթուիս գիւղը և իւր բազմաթիւ  
քարանձանները, վարձիայի ասորերկրեայ  
մենաստանը և Ալալքալաքը. սակայն զըժ-  
բողորար ժամանակ չունէինք, աւտի հարկ  
եղաւ ետ կենալ փափաքներէս:

Երեկոյեան ժամը հինգին՝ կը նստինք  
քառաձի փառաւոր փայտոսնի մը մէջ, որ  
կը տանի զմեզ գէպ ի Արաս-թուման:

Փոքրով-չայի երկայնութեամբ զսնուող  
ձանապարհն միշտ գէպ ի վեր կ'եւելէր: Ան-  
տառները նորէն երևան կ'եւելէին շրջակայ  
լեռանց կողերուն վրայ: Օդն սկսաւ աւելի  
ևս գեղեցիկանալ, մանաւանդ արևը մանելէն  
յետոյ, և տեսարանն աւելի նկարագրէ կ'ըլ-  
լար՝ որչափ որ կը մտտենայինք ամառնային  
կայարանին, որ երեցաւ մեզի գիշերուան  
դէմ, չափազանց վայրենի շրջանակի մը մէջ:  
Արաս-թուման շինուած է նեղ ձորանովի  
մը մէջ՝ որ շրջապատուած է եղեւնափայտի  
փառաւոր անտառներով, և օսկից կ'անցնի  
անթիւ ջրվէժներու հեղեղ մը, որուն եղե-  
րաց վրայ խնդուած կը տեսնուին բազմա-  
թիւ գիւղական անակներ և ամարանոցներ: